# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 6

**Լսեցին.** 1.Խաչաղբյուր համայնքի ներհամայնքային ու համայնքը մայրուղուն կապող ճանապարհների **ձյան** մաքրման մասին:

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

**Համայնքի** ղեկավարը ներկայացրեց, որ տարին սկսվել է աննախադեպ առատ ձյունով, ինչը որոշակի դժվարանցանելի վիճակ է ստեղծել ինչպես տրասպորտային միջոցների, այնպես էլ հետիոտնի համար, բնակիչները առանց ձյան մաքրման հնարավորություն չունեն դուրս գալ իրենց բակերից՝ ուստի անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել: Համայնքի ղեկավարն ավելացրեց նաև որ համայնքում համապատասխան ձյուն մաքրող տեղնիկայի բացակայության պատճառով անհրաժեշտ է այլ կազմակերպությունների կամ համապատասխան տեխնիկա ունեցող անձանց հետ պայմանագրային հիմունքներով խնդրին լուծում տալ: Նախապես եղել է համապատասխան պայմանավորվածություն և արդեն ամանորի անմիջապես հաջորդ օրը, ինչպես ներհամայնքային կենտրոնական, այնպես էլ համայնքը մայրուղուն կապող ճանապարհները մաքրվել են ձյունից:

Կատարվելիք աշխատանքների համար համայնքի ավագանուն առաջարկվեց համաձայնություն տալ 300000(երեք հարյուր) հազար ՀՀ դրամ հատկացնել համայնքի ճանապարհները ձյունից մաքրելու համար: Ծախսերը կատարվելու են ըստ առաջացած անհրաժեշտության:

Ավագանու անդամ Տ. Գաբոյանը կարծիք հայտնեց, քանի որ պարզ չէ տեղացող ձյան քանակի մասին՝ ուստի ֆինանսական հատկացումները կատարել ըստ անհրաժեշտության:

Քննարկումից հետո ավագանին

որոշեց՝

Տալ համաձայնություն համայնքի բյուջեից 300000(երեք հարյուր) հազար ՀՀ դրամ հատկացնել համայնքի ճանապարհների ձյան մաքրման աշխատանքները կատարելու համար:

**Ավագանու** անդամները օրակարգը հաստատեցին քվեարկությամբ:

Կողմ Դեմ Ձեռնպահ:

- Վ.Խաչատրյան
- Տ.Գաբոյան
- Ա.Գաբոյան
- Գ.Խաչատրյան
- Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան